

Մ.Հ.Մ.Հ.Կ.



C.A.R.P.S.

ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**ՄԵՎԱՆԱ ԼՃԻ ՍՏՈՐՁՐՅԱ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱՐՇԱՎ
17-27 հուլիսի, 2016թ**

Սևանա լճի ստորջրյա ավազանի հերթական յոթերորդ հետազոտական արշավը կիրականացվի 2016 թ. -ի հուլիսի 17-ից 27-ն ընկած ժամանակահատվածում: Նախորդ արշավների արդյունքները բավականին հուսադրող էին և օգտակար հայ գիտնականների համար: Ֆրանս-հայկական այս առաքելությունը իրականացվում է ծրագրի երկու պատասխանատուների՝ Կլոդ Թուլումջյանի (նախաձեռնող), Ստեփան Կոչայանի և ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիային գիտահետազոտական ինստիտուտների, Երևանի պետական համալսարանի դասախոս-գիտաշխատողների, ինչպես նաև Բնապահպանության նախարարության և որոշ պետական մարմինների, այդ թվում՝ «Սևան Ազգային պարկի» հետ սերտ համագործակցությամբ:

2012թ-ից սկսած Սևանա լճի ստորջրյա գիտարշավները իրականացվում են Ստորջրյա հետազոտությունների և սուզումների հայկական կենտրոնի (ՄՀՄՀԿ) պատասխանատվության ներքո : Հայկական այս կազմակերպությունը հիմնադրվել է 2012թ-ի մարտին՝ նախագահ Կլոդ Թուլումջյանի և փոխնախագահ Արա Ավագյանի ղեկավարությամբ (ՄՀՄՀԿ-ի հիմնախնդիրները ներկայացվում են կցված փաստաթղթում) : Գիտարշավներին իր կարևոր աջակցությունն է ցուցաբերում ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանությունը : ՄՀՄՀԿ-ը հիմնականում զբաղվում է ստորջրյա սուզումներով և նպատակաուղղված է զարգացնել այս ոլորտը Հայաստանում :

Այս տարի ՄՀՄՀԿ-ն հանձն է առել երկու գիտական ծրագրերի շրջանակում իրականացնել ստորջրյա հետազոտություններ: Ծրագրերը իրականացվում են Գիտությունների ազգային ակադեմիայի Երկրաբանական գիտությունների ինստիտուտի գիտաշխատողների նախաձեռնությամբ և առաջնորդությամբ: Նախատեսվում են Քանազեղի հնավայրի և հարավային Արտանիշ թերակղզու ավիամերձ հատվածներում ստորջրյա ռելիեֆի առանձնահատկությունների, աղբյուրների աշխարհարագրական տեղաբաշխման,

Ստորջրյա Հետազոտությունների և Սուզումների Հայկական Կենտրոն (ՄՀՄՀԿ)

ՀՀ օրենքով 07/03/2012թ-ի պետական գրանցման թիվ 211.171.75452 – Կոդ 41628742

Ոչ առևտրային հասարակական կազմակերպություն

Centre Arménien de Recherches et de Plongées Subaquatiques (CARPS)

ONG non lucrative, de droit arménien, enregistrée le 07/03/2012 sous le n° 211.171.75452 – CODE 41628742

Մ.Հ.Մ.Հ. Կ.



C.A.R.P.S.

նյութական կազմի ուսումնասիրություններ: Այս արշավների նպատակն է նաև ընդլայնել ստորջրյա հետազոտությունների աշխարհագրությունը՝ ներառելով դեռևս չբացահայտված վայրեր: Հիշեցնենք, որ մինչ օրս Սևանա լճի մեծ մասն ուսումնասիրված չէ սուզորդների կողմից: Ձեռք բերված բոլոր նմուշները ինչպես նաև լուսանկարները և տեսանյութերը կտրամադրվեն հայ գիտնականներին:

ՄՀՄՀԿ նպատակներից է վերա-ակտիվացնել www.sevanlake.am ինտերնետային կայքը, այն շարունակական համալրել Սևանա լճին վերաբերող նյութերով, այդ թվում բուսական և կենդանական աշխարհը ներկայացնող ստորջրյա լուսանկարներով և տեսանյութեր: Այս ծրագիրն իրականացվում է ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանության նախաձեռնությամբ «Ինստիտու ֆղանսե»-ի և «Կազա» կազմակերպության հետ համագործակցությամբ:

ՄՀՄՀԿ գործունեության կարևորագույն նպատակներից է նպաստել հասարակության և հատկապես երիտասարդների իրազեկությանը Սևանա լճի խնդիրների վերաբերյալ՝ դրանով իր ներդրումն բերելով ՀՀ պետական և հասարակական բազմաթիվ կազմակերպությունների կողմից իրականացվող ջանքերին:

Գիտարշավի ավարտին տեղի կունենա մամլո ասուլիս, որի ընթացքում կամփոփվեն ձեռք բերված նախնական արդյունքները:

Տեղեկությունների համար դիմել՝

Էլլինա Հովսեփյան	– ellina_99@yahoo.fr
Արա Ավագյան	(+374) 093.13.19.80 – avagn1064@gmail.com
Ստեփան Կոջայան	(+374) 098.42.39.58 – stephane.kojayan@hotmail.fr
Կլոդ Թուլումջյան	(+374) 098.695.622 – touloumdjian.cl@wanadoo.fr

Ստորջրյա Հետազոտությունների և Սուզումների Հայկական Կենտրոն (ՄՀՄՀԿ)

ՀՀ օրենքով 07/03/2012թ-ի պետական գրանցման թիվ 211.171.75452 – Կոդ 41628742

Ոչ առևտրային հասարակական կազմակերպություն

Centre Arménien de Recherches et de Plongées Subaquatiques (CARPS)

ONG non lucrative, de droit arménien, enregistrée le 07/03/2012 sous le n° 211.171.75452 – CODE 41628742